



ԼԵՅՆ ԿԻՐԿԼԱՆԴԻ ԱՆՎԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Լեհ-Ամերիկյան Ազատության Հիմնադրամը
ծրագրի հիմնադիրը
և
Փոփոխության Առաջնորդների Հիմնադրամը
ծրագրի համակարգող

հայտարարում են հերթական բաց մրցույթ

Ուկրաինայի, Բելառուսի, Ռուսաստանի, Մոլդովայի, Վրաստանի, Հայաստանի,
Ադրբեջանի, Ղազախստանի և Ղրղզստանի
հավակնորդների համար

**2017/2018 ուսումնական տարում Լեհաստանում Լեյն Կիրկլանդի անվ.
կրթաթոշակ**
ստանալու նպատակով:

Ծրագիրը նախատեսված է բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդ լիդերների համար, ովքեր շահագրգռված են իրենց երկրներում և տարածաշրջանում ժողովրդավարության հաստատման, տնտեսության և քաղաքացիական հասարակության զարգացման հարցում:

Ծրագիրը ներառում է ուսուցում լեհական բուհերում 2 կիսամյակի ընթացքում և 2-4 շաբաթ տևողությամբ աշխատանքային ստաժ պետական կամ մասնավոր հիմնարկություններում:

Ծրագրին կարող են դիմել այն անձինք, ովքեր կրթաթոշակային ծրագրի ավարտից հետո վերադառնալու են իրենց երկրներ և կիրառելու են այնտեղ կրթաթոշակային ծրագրի ընթացքում իրականացրած ծրագիրը և ստացած գիտելիքները:

Ծրագրի հիմնում ընկած է փոխադարձ հարգանքի սկզբունքը, անկախ ազգային պատկանելությունից :

ՈԼՈՐՏՆԵՐ՝

- Տնտեսագիտություն և կառավարում,
- Ադմինիստրացիա / կառավարում (բիզնես, ՀԿ, մշակույթ, բնապահպանություն, առողջապահություն, կրթություն),
- Հանրային կառավարում (պետական կառավարում և տեղական ինքնավարություն),
- Իրավագիտություն,
- Հասարակագիտական գիտություններ (սոցիալական հոգեբանություն, սոցիոլոգիա)
- Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ
- Զարգացման քաղաքականություն և մարդասիրական օգնություն

Կրթաթոշակային ծրագրի ընթացքում գրված դիպլոմային աշխատանքը կարող է կրել կամ գիտական կամ էլ պրակտիկ բնույթ (վերջինիս դեպքում աշխատանքը պետք է ներառի իր մեջ գիտական բնույթի ներածական մաս)

ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐ՝

2017/2018 ուսումնական տարում Գիրկլանդի կրթաթոշակային ծրագիրը հասցեագրված է հետևյալ մասնագիտական ոլորտների ներկայացուցիչներին՝

- փորձագետներին, քաղաքական գործիչներին, պետական և ինքնավար հաստատությունների աշխատակիցներին;
- ձեռնարկատերերին, կառավարիչներին (մենեջերներին);
- հասարակական կազմակերպությունների առաջնորդներին, մշակույթի գործիչներին և հասարակական գործիչներին;
- բուհերի դասախոսներին
- լրագրողներին:

ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ՝

- Վերը նշված երկրներից մեկի քաղաքացիության և մշտական կացության արկայություն (Լեհաստանի մշտական կացության քարտ ունեցող անձինք չեն կարող հավակնել Գիրկլանդի կրթաթոշակին);
- Լիարժեք բարձրագույն կրթություն (մագիստրոսի կոչում);
- Տարիքը մինչև 35 տարեկան (հիմնավորված դեպքերում մինչև 40 տարեկան);
- Նվազագույնը երկու տարվա աշխատանքային փորձ
- Լեհերենի իմացության բավարար մակարդակ դասախոսությունների մասնակցելու և դիպլոմային աշխատանքը գրելու համար: Որակավորման ժամանակ լեհերենի իմացությունը պետք է լինի նվազագույնը B 1 մակարդակի:
 - Բացառությամբ Ուկրաինայից և Բելառուսից, մյուս երկրներից դիմորդները հնարավորություն ունեն ուսուցումն իրականացնեն անգլերեն լեզվով /նվազագույնը անգլերենի B 1 մակարդակ/ այդ լեզվով առարկաների առկայության դեպքում: Այդ ժամանակ բավարար է լեհերենի նվազագույն իմացությունը /A 1 մակարդակ/:

ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ

կտրվի այն հավակնորդներին, ովքեր

- ակտիվ են իրենց մասնագիտական և հասարակական ոլորտում;
- ունեն մեծ նվաճումներ իրենց բնագավառներում;
- մինչ այդ չեն ուսանել Լեհաստանում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ՝

1. Առցանց լրացված մասնակցության հայտ՝
 - անձնական տվյալների լրացման հարցաթերթիկ
 - Լեհաստանում կացության ծրագիր, կրթաթոշակային ծրագրին մասնակցելու ցանկության հիմնավորում, առաջարկներ Լեհաստանում կացության վերաբերյալ և ապագայում պլանների նկարագրություն (4000-6000 նիշ բաց տարածություններով):
2. Երկու երաշխավորագիր, որոնցում ներկայացված կլինեն հայցատուի անցած նվաճումները և որակավորումները, ինչպես նաև նրա հույսերը վերաբերյալ նրա հետագա զարգացման և գործունեության մասնագիտական կամ հասարակական դաշտում: Նամակները պետք է գրված լինեն լեհերեն, անգլերեն կամ ռուսերեն լեզուներով և ուղարկվեն էլեկտրոնային փոստի միջոցով:
3. Բարձրագույն կրթության դիպլոմի պատճե (առկայության դեպքում, գիտությունների թեկնածուի վկայականի պատճե) ուղարկված էլեկտրոնային փոստի միջոցով:

ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ՝

Ծրագրի մանրամասն նկարագրության և հայտաձևի լրացման կարգին կարելի է ծանոթանալ անմիջապես այցելելով www.kirkland.edu.pl կայք էջը, կամ էլեկտրոնային նամակագրության միջոցով դիմել ծրարի համակարգողներին:

Հայտաձևը պետք է լրացվի առցանց: Հայտաձևը առցանց լրացնելուց հետո անհրաժեշտ է տպել համակարգի կողմից գեներացված հայտը հաստատող էջը: Տվյալ ստորագրված էջին կցել հավակնորդի ակտուալ նկարը և ուղարկել փոստով Գիրկլանդ ծրարի հասցեին:

Երկու երաշխավորագրերի և դիպլոմի պատճենների էլեկտրոնային տարբերակները (սկան արված) պետք է նույնպես ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ kirkland@kirkland.edu.pl:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐ

Գիրկլանդի 2017/2018 կրթաթոշակային ծրագրի հայտերի ներկայացնելու վերջնաժամկետն է՝

2017 թ. -ի մարտի 1:

Վերը նշված վերջնաժամկետից ուշ ստացված հայտերը չեն դիտարկվի:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Կրթաթոշակը կազմում է ամսական 1800 PLN:

Լրացուցիչ, ծրագիրը հոգ է տանում հետևյալ ծախսերը՝ ուսման վարձը, բնակության վարձը, ապահովագրությունը, ճանապարհաճախսը Լեհաստան և վերադառնալը, վիզայի արժեքը, անհրաժեշտ նյութերի և գիտական գրականության գնումները:

Կրթաթոշակատուներին կտրամադրվեն համակարգիչներ, որոնք կարող են դառնալ սեփական՝ միայն ծրագրի բոլոր պահանջները կատարելուց հետո:

ԱՅՑԻ ԾՐԱԳԻՐ՝

- Ծրագրի հանդիսավոր բացում (2017 թ. սեպտեմբերի կեսին),
- Նախապատրաստական տեղեկատվական դասընթաց (10 օր),
- Դասընթացներ Լեհաստանի առաջատար բուհերում՝ Վարշավայում, Կրակովում, Պոզնանում, Վրոցլավում, Լյուբլինում (2 կիսամյակ),
- Գիտականային և դիպլոմային աշխատանքների պատրաստում,
- Չորս ինտեգրացիոն հանդիպումներ՝ բոլոր կրթաթոշակատուների մասնակցությամբ,
- Աշխատանքային ստաժ (2 շաբաթ)
- Ծրագրի հանդիսավոր փակում և դիպլոմների հանձնման արարողություն (2018 թ. հունիսի վերջին):

ԾՐԱԳՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՆ Է

Լեյն Գիրկլանդը (1922-1999), ամերիկյան արհմիությունների (AFL-CIO) բազմամյա առաջնորդ, Լեհ-Ամերիկյան Ձեռնարկատիրության Հիմնադրամի տնօրենների խորհրդի անդամ: 80-ական թվականներին, իր մասնակցությամբ և հեղինակությամբ, աջակցում էր լեհական «Սոլիդարնոստ» շարժմանը: Հասկանում և սատարում էր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի նաև այլ ժողովուրդների ազատության և ժողովրդավարության ձգտումները: Պարգևատրվել է բարձրագույն պարգևներով. այդ թվում՝ ամերիկյան «Ազատության Մեդալով» և լեհական «Մայիտակ Արծվի Շքանշանով»:

ՀԵՏԱՂԱՐՁ ԿԱՊ՝

Փոփոխության առաջնորդների հիմնադրամ
Վեբ կայք: www.leadersofchange.pl

Կրկլան դ ծրագիր

Երոուսաղոմի պողոտա 133 բն. 56, 02-304 Վարշավա, Լեհաստան

Էլ. փոստ: kirkland@kirkland.edu.pl

Վեբ կայք: www.kirkland.edu.pl

ԼԵՀ – ԱՄԵՐԻԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (PAFW)՝ ծրագրի հիմնադիր

POLSKO-AMERYKAŃSKA
FUNDACJA WOLNOŚCI



POLISH-AMERICAN
FREEDOM FOUNDATION

ԼԱԱՀ-ը սկսել է գործել 2000 թվականին: Հիմնադրամի գլխավոր նպատակներն են՝ ամրապնդել ժողովրդավարությունը, ուժեղացնել քաղաքացիական հասարակությունը, հավասարեցնել անձնական և հասարակական զարգացման հնարավորությունները, զարգացնել շուկայական տնտեսությունը և կիսվել լեհական փորձով տրանսֆորմացիայի բնագավառում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների հետ: ԼԱԱՀ-ը ֆինանսավորում է իր գործունեությունը հիմնադրամի եկամուտներից, որի աղբյուրն են հանդիսանում Լեհ-Ամերիկյան Ձեռնարկատիրության Հիմնադրամի (ԼԱՁՀ) միջոցները: Մինչ օրս ԼԱԱՀ-ը փոխանցել է Հիմնադրամին 250 մլն ԱՄՆ դոլար: 2000 թվականից ի վեր Հիմնադրամը իր ծրագրերի իրականացման համար տրամադրել է ավելի քան 100 մլն ԱՄՆ դոլար: Հիմնադրամի ծրագրերը համակարգվում են մի շարք լեհական հասարակական կազմակերպությունների միջոցով՝ համաձայն Հիմնադրամի կողմից մշակված սկզբունքների և կանոնակարգերի:

Լեյն Կիրկլանդի անվ. Կրթաթոշակային Ծրագիրը ԼԱԱՀ-ի երկարաժամկետ մի նախաձեռնություն է, որը կյանքի կոչվեց 2000 թվականին և 2001 թվականից համակարգվում է Վարշավայում Ֆուլբրայթի Հանձնաժողովի կողմից: Հիմնադրամի և իրականացվող ծրագրերի մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ <http://www.pafw.pl> կայք էջում:



FUNDACJA
LIDERZY
PRZEMIAN

ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ (FLP)

ծրագրի համակարգող

Հիմնադրամը ստեղծվել է 2016 թվականին Լեհ-Ամերիկյան Ազատության Հիմնադրամի կողմից: Հիմնադրամի նպատակն է համակարգել Լեհ-Ամերիկյան Ազատության Հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ծրագրերը /Լեյն Կիրկլանդի անվան կրթաթոշակային ծրագիրը և Ուսուցողական այցեր դեպի Լեհաստան ծրագիրը/: Հիմնադրամը Լեհ-Ամերիկյան Ազատության հիմնադրամի, Նատոլինի Եվրոպական Կենտրոնի և Գերմանական Մարշալ Հիմնադրամի հետ կազմակերպում է նաև Վարշավայի Եվրո-Ատլանտյան ամառային դպրոցը / WEASA/: Հիմնադրամին փոխանցված բոլոր ծրագրերը համակարգվում են փորձառու աշխատակազմի կողմից: Նոր անձանց ներգրավումը և նրանց փորձի փոխանցումը աշխատակազմի գործառնություններից մեկն է: Ցանկանում ենք Լեհաստանի լավագույն փորձը փոխանցել ակտիվ անձանց Արևելյան Եվրոպայից, Կովկասից և Կենտրոնական Ասիայից: Գիտական հաստատությունների, հանրային և հասարակական սեկտորների հետ համատեղ ցանկանում ենք ներմուծել պրակտիկայի և Լեհաստան կատարվելիք գիտական այցերի նոր ձևեր: Ստեղծում ենք միջավայր այն մարդկանց համար, ովքեր հավատում են դրական փոփոխություններին:

Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել հիմնադրամի վեբ կայքը:
www.leadersofchange.pl